

Այցելություն Հանրային կարգավիճակ ստացած  
ՀՀ համայնքային գրադարան

Ի կատարումն ՀՀ «Գրադարանների և գրադարանային գործի մասին» օրենքի 8-րդ հոդվածի և 28.02.2013թ. «Հանրային գրադարանների հավատարմագրման կարգը և վկայականի ձևը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման, մի շարք գրադարաններ ստացել են Հանրային գրադարանի կարգավիճակ:

Հավատարմագրված գրադարանները պետության աջակցությամբ նյութատեխնիկական բազայի զարգացման ծրագրի շրջանակներում ստացել են գրադարանային գույք և համակարգչային տեխնիկա:

Կատարված աշխատանքներին տեղում ծանոթանալու և իրավիճակը գնահատելու նպատակով 2017թ. Հայաստանի ազգային գրադարանի աշխատակիցների կողմից այցելություն է իրականացվել Արագածոտնի մարզի Նոր Արթիկ համայնքի Սամվել Մարգարյանի անվան գրադարան ՀՈԱԿ: Տեղում արձանագրվեց բարեկարգ վիճակ, առկա էին ծրագրով տրամադրված գույքն ու համակարգչային տեխնիկան:





